ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1»

ք. Երևան «19» «հուլիսի» 2016թ.

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Գրիգորյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա.Անդրեասյանի, ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված S-1-21, Մ-3–Քուչակ-Եղիպատրուշ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված 2016 թվականին իրականացվելիք Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 30.10.2016թ., իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասը պետք է կատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո 280 օրացուցային օրվա ընթացքում:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց

վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից

մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 (երեք) տարին: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի ժամկետ է սահմանվում 3 տարին:

3.4.11 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (Հավելված N 4) ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 40 (քառասուն) օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող

պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 689,855,538 (վեց հարյուր ութսունինը միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար հինգ հարյուր երեսունութ) ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն, ընդ որում 2016 թվականին իրականացվելիք աշխատանքների գինը կազմում է 130,471,430 (մեկ հարյուր երեսուն միլիոն չորս հարյուր յոթանասունմեկ հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Պայմանագրով նախատեսված ընդհանուր աշխատանքների մնացած մասը կկատարվեն դրանց համար համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագիր (կողմերի միջև փոխադարձ համաձայնեցված կարգով վերոհիշյալ համաձայնագրով կարող է նախատեսվելկանխավճար):

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: 2016 թվականին կատարված աշխատանքների մասով դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասի կատարման մասով դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա կողմերի միջև կնքվելիք լրացուցիչ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվումէայնամսում, որումդրամականմիջոցներընախատեսվածեն, սակայնոչուշքանտվյալ տարվա դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում,

Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն 2016 թվականին իրականացվելիք աշխատանքների մասով ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, իսկ ընդհանուր աշխատանքների մնացած մասի կատարման մասով՝ ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման և պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցների նախատեսման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը կլուծարվի, եթե այն կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում պայմանագրի մնացած մասի աշխատանքների կատարման համար ֆինանսական միջոցները չեն նախատեսվի:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.6 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.7 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.9 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 2.1,N 3, N 4 և N 4.1 հավելվածները կազմված՝ 10 էջից, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.10 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011[illegible]
[illegible]02565518

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300117911[illegible]100
ՀՎՀՀ 09802793

Կ.Տ

Հավելված թիվ 1
«19» «հուլիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1» գնման պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Տ-1-21, Մ-3-Քուչակ-Եղիպատրուշ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների (ընդանուր)

(ՀՀ դրամ)

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավ.	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1	Հողային աշխատանքներ				
1	III6վ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	$մ^3$	1160	510	591600
2	IV10ե գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	$մ^3$	1170	510	596700
3	VII20ա նախօրոք փխրեցրած գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	$մ^3$	120	901	108120
4	III6վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով , տեղափոխում լիցք 1.0կմ	$մ^3$	40	3854	154160
5	Նույնը IV10ե գրունտի մշակում և բարձում էքսկավատորով , տեղափոխում լիցք 1.0կմ	$մ^3$	80	4060	324800
6	III6վ գրունտի մշակում և բարձում էքսկավատորով , տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	4510	3852	17372520
7	Նույնը IV10ե գրունտի մշակում և բարձում էքսկավատորով , տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	8350	4060	33901000
8	Նույնը VII20ա գրունտի մշակում և բարձում էքսկավատորով , տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	740	5736	4244640
9	III6վ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով, տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	500	4200	2100000
10	IV10ᵉ գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով, տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	930	4363	4057590
11	VII20ᵃ նախօրոք փխրեցրած գրունտի մշակում, տեղափոխում բուլդոզերով 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով, տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	80	6636	530880
12	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	$մ^3$	2740	746	2044040
13	Լեռնային ապառների փխրեցում պայթանցքային լիցքերով 0.5-1.0մ պայթանցքի խորությամբ VII20ᵃ գրունտում	$մ^3$	940	2943	2766420
14	Ժայռային գրունտի տեղափոխում լցակույտից 1.0կմ-ից, ՊԿ39+23-ՊԿ39+34 տեղամասում (կամրջի մոտ աջ	$մ^3$	50	5736	286800

	կողմից) լիցքի իրականացման համար				
15	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ^3	50	746	37300
				2.Ընդամենը	**69116570**
2	**Ճանապարհային պատվածք**				
1	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի վերօգտագործում սառը վերամշակման եղանակով h=20սմ, ցեմենտի ավելացումով 1մ^2-16կգ	մ^2	52936	3068	162407648
2	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^2	1900	506	961400
3	Չափազատված խիճ h=16սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ^2	մ^2	1342	3686	4946612
4	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ	մ^2	54236	6300	341686800
				3.Ընդամենը	**510002460**
3	**Կողնակներ**				
1	Ցամաքուրդային գրունտի տեղափոխում պահուստից 5.0կմ-ից կողնակների իրականացման համար	մ^3	2374	6417	15233958
2	Կողնակների հարթեցում և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 3 անցումով h=10սմ և h=21սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ^2	23273	92	2141116
				4.Ընդամենը	**17375074**
4	**Ուղիներ**				
1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ^3	2.9	5876	17040
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	56.7	42147	2389735
3	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ^3	57.86	1981	114621
4	Գլխադիրների միաձույլ բետոն B-15	մ^3	4.05	115109	466191
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^2	2567	478	1227026
6	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ^2	մ^2	2466	3203	7898598
7	Տաք մանրահատիկ ա/բետոն h=4սմ	մ^2	2411	4975	11994725
				5.Ընդամենը	**24107936**
5	**Մուտքեր**				
1	Ավազակոպճային շերտ խողովակների տակ h=10սմ	մ^3	3.0	5876	17628
2	Մետաղական խողովակների տեղադրում d=325.մմ; 1գծ.մ=39.5կգ; δ=5մմ	գծ.մ	42	42147	1770174
3	Խողովակների ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	մ^3	42.86	1981	84906
4	Գլխադիրների միաձույլ բետոն B-15	մ^3	2.85	115110	328064
5	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ^2	338.45	478	161779
6	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ^2	մ^2	338.45	3203	1084055
7	Տաք մանրահատիկ ա/բետոն h=4սմ	մ^2	338.45	4975	1683789
				6.Ընդամենը	**5130394**
6	**Մայթեր**				
1	Բազալտե եզրաքարերի տեղադրում 15x30սմ չափսի բետոնե հիմքի վրա	գծ.մ	203	19738	4006814
2	Ավազակոպճային շերտ h=12սմ	մ^2	266	1264	336224
3	Ավազահատիկ ա/բետոն h=3սմ	մ^2	266	4533	1205778

				7.Ընդամենը	5548816
7	Ե/բ հավաքովի վաքեր				
1	Ավազակոպճային շերտ վաքերի տակ h=10սմ	$մ^3$	9.15	6549	59923
2	Ե/բ հավաքովի վաքերի տեղադրում L=3.0մ; 34x30սմ ;	գծ.մ	183	20003	3660549
3	Վաքերի ջրամեկուսացում երկշերտ տաք բիտումով	$մ^2$	230.58	1311	302290
				8.Ընդամենը	4022763
8	Ջրթող խողովակների մաքրում և վերանորոգում				
1	Գոյություն ունեցող ջրթող խողովակների մաքրում ձեռքով, բարձում , տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	126	7735	974610
2	d=0.75մ ե/բ խողովակի գլխադիրի իրականացում միաձույլ բետոնից B-15	$մ^3$	0.9	115110	103599
3	Նույնը d=1.0մ ե/բ խողովակի համար	$մ^3$	73.3	115110	8437563
4	Նույնը d=1.5մ ե/բ խողովակի համար	$մ^3$	9.5	115110	1093545
5	d=1.25մ ե/բ խողովակի գլխադիրի կրկնակի սվաղ ցեմենտավազե շաղախով δ=3սմ	$մ^2$	20	2360	47200
6	Նույնը d=1.5մ ե/բ խողովակի գլխադիրի	$մ^2$	44	2360	103840
7	d=1.0մ ե/բ խողովակի վաքի իրականացում միաձույլ բետոնով B-12.5	$մ^3$	0.8	80825	64660
				9.Ընդամենը	10825017
9	Նոր մետաղական խողովակների կառուցում d=530մմ				
1	Մետաղական խողովակի տեղադրում d=530մմ; ՊԿ 85+52	գծ.մ	10	130696	1306960
2	Մետաղական խողովակի տեղադրում d=530մմ; ՊԿ 86+78	գծ.մ	17	121164	2059788
				10.Ընդամենը	3366748
10	Նոր ե/բ խողովակների կառուցում d=1.0մ				
1	Ե/բ խողովակի տեղադրում d=1.0մ, ՊԿ32+98	գծ.մ	11	336029	3696319
2	Ե/բ խողովակի տեղադրում d=1.0մ, ՊԿ65+72	գծ.մ	11	309152	3400672
3	Ե/բ խողովակի տեղադրում d=1.0մ, ՊԿ68+33	գծ.մ	11	309200	3401200
4	Ե/բ խողովակի տեղադրում d=1.0մ, ՊԿ62+63	գծ.մ	14	284910	3988740
				11.Ընդամենը	14486931
11	Գոյություն ունեցող d=1.0մ ե/բ խողովակների երկարացում				
1	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ0+28	գծ.մ	3	528814	1586442
2	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ7+76	գծ.մ	4	543219	2172876
3	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ22+08	գծ.մ	4	521410	2085640
4	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ27+96	գծ.մ	4	394591	1578364
5	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ35+15	գծ.մ	2	573510	1147020
6	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ50+02	գծ.մ	2	672865	1345730
7	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ52+78	գծ.մ	2	691444	1382888
8	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ58+80	գծ.մ	2	672057	1344114
9	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ83+75	գծ.մ	4	515352	2061408
10	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ84+95	գծ.մ	2	670442	1340884
				12.Ընդամենը	16045366
12	Անվտանգության էլեմենտներ				
1	Ճանապարհային նշանների տեղադրում	հատ	86	55003	4730258
2	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում	գծ.մ	2299	20830	47888170
3	Գոյություն ունեցող մետաղական արգելափակոցների ապամոնտաժում, վերատեղադրում, ներկում	գծ.մ	28	16720	468160
4	Ե/բ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	446	14451	6445146
5	Գոյություն ունեցող սյուների ապամոնտաժում	հատ	30	1550	46500

5	Երթևեկելի մասի նշագծում ռեֆլեկտորային ներկով	$մ^2$	384.15	1641	630390
				13.Ընդամենը	60208624
				Ընդհանուրը*	740,236,700
	* միավորի արժեքը ներառում է շահույթը և ԱԱՀ				

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետական
ՀՀ 90[illegible]
ՀՎՀՀ 02[illegible]

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

Կ.Տ

Հավելված թիվ 1.1
«Լ9» «հուլիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1» գնման պայմանագրի

Ծավալաթերթ - նախահաշիվ
S-1-21, Մ-3-Քուչակ-Եղիպատրուշ ավտոճանապարհի հիմնանորոգման
աշխատանքներ (2016թ)

(ՀՀ դրամ)

հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավ.	Քանակը	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
1	**Հողային աշխատանքներ**				
1	IV10ե գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	$մ^3$	460	510	234600
2	VII20ա նախօրոք փխրեցրած գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ լիցք	$մ^3$	120	901	108120
3	IV10ե գրունտի մշակում և բարձում էքսկավատորով , տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	1920	4060	7795200
4	VII20ա գրունտի մշակում և բարձում էքսկավատորով , տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	740	5736	4244640
5	IV10^{ե} գրունտի մշակում և տեղափոխում բուլդոզերով 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով, տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	210	4363	916230
6	VII20^{ա} նախօրոք փխրեցրած գրունտի մշակում, տեղափոխում բուլդոզերով 50մ կուտակումով, բարձում էքսկավատորով, տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	80	6636	530880
7	Լիցքի խտացում պնևմոգլդոնով մեկ հետքով 6 անցումով 30սմ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	$մ^3$	630	746	469980
8	Լեռնային ապառների փխրեցում պայթանցքային լիցքերով 0.5-1.0մ պայթանցքի խորությամբ VII20^{ա} գրունտում	$մ^3$	940	2943	2766420
				2.Ընդամենը	**17066070**
2	**Ճանապարհային պատվածք**				
1	Գոյություն ունեցող ա/բետոնե պատվածքի վերօգտագործում սառը վերամշակման եղանակով h=20սմ, ցեմենտի ավելացումով $1մ^2$-16կգ	$մ^2$	9652	3068	29612336
2	Ավազակոպճային շերտ h=10սմ	$մ^2$	1900	506	961400
3	Չափազատված խիճ h=16սմ բիտումի տարածումով 4.12տ/$1000մ^2$	$մ^2$	1342	3686	4946612
4	Տաք մանրահատիկ ա/բետոն h=5սմ	$մ^2$	10952	6300	68997600
				3.Ընդամենը	**104517948**
3	**Կողնակներ**				
1	Ցամաքուրդային գրունտի տեղափոխում պահուստից 5.0կմ-ից կողնակների իրականացման համար	$մ^3$	497	6417	3189249
2	Կողնակների հարթեցում և խտացում պնևմոգլդոնով 1 հետքով 3 անցումով h=10սմ և h=21սմ շերտի	$մ^2$	4504	92	414368

	հաստությամբ, ջրի տարածումով				
				4.Ընդամենը	3603617
4	Ուղիներ				
1	Ավազակոպճային շերտ h=10սմ	$մ^2$	337	478	161086
2	Չափազատված խիճ h=12սմ բիտումի տարածումով 4.12տ/1000$մ^2$	$մ^2$	346	3203	1108238
3	Տաք մանրահատիկ ա/բետոն h=4սմ	$մ^2$	362	4975	1800950
				5.Ընդամենը	3070274
5	**Ջրթող խողովակների մաքրում և վերանորոգում**				
1	Գոյություն ունեցող ջրթող խողովակների մաքրում ձեռքով, բարձում , տեղափոխում լցակույտ 1.0կմ	$մ^3$	29	7735	224315
2	d=0.75մ ե/բ խողովակի գլխադիրի իրականացում միաձույլ բետոնից B-15	$մ^3$	0.9	115110	103599
3	d=1.5մ ե/բ խողովակի գլխադիրի կրկնակի սվաղ ցեմենտավազե շաղախով δ=3սմ	$մ^2$	22	2360	51920
				9.Ընդամենը	379834
6	**Գոյություն ունեցող d=1.0մ ե/բ խողովակների երկարացում**				
1	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ0+28	գծ.մ	3	528814	1586442
2	d=1.0մ ե/բ խողովակի երկարացում ՊԿ7+76	գծ.մ	4	543219	2172876
				12.Ընդամենը	3759318
7	**Անվտանգության էլեմենտներ**				
1	Ճանապարհային նշանների տեղադրում	հատ	29	55003	1595087
2	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում	գծ.մ	236	20830	4915880
3	Ե/բ ազդանշանային սյուների տեղադրում	հատ	91	14451	1315041
4	Երթևեկելի մասի նշագծում ռեֆլեկտորային ներկով	$մ^2$	95.5	1641	156716
				13.Ընդամենը	7982724
				Ընդհանուրը	139,999,951
* միավորի արժեքը ներառում է շահույթը և ԱԱՀ					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ [illegible]
[illegible] 02565518

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802783

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2
«19» «հուլիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1» գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Տ-1-21, Մ-3-ՔՈՒՉԱԿ-ԵՂԻՊԱՏՐՈՒՇ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄՆԱՑԱԾ ՄԱՍԻ ՀԱՄԱՐ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Հողային աշխատանքներ	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 150 օր հետո
2	Ճանապարհային պատվածք	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 210 օր հետո
3	Կողնակներ	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 280 օր հետո
4	Ուղիներ	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 280 օր հետո
	Մուտքեր	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 280 օր հետո
	Մայթեր	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 280 օր հետո
	Ե/բ հավաքովի վաքեր	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 200 օր հետո
	Ջրթող խողովակների մաքրում և վերանորոգում	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 210 օր հետո
	Նոր մետաղական խողովակների կառուցում d=530մմ	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 180 օր հետո
	Նոր ե/բ խողովակների կառուցում d=1.0մ	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 180 օր հետո
	Գոյություն ունեցող d=1.0մ ե/բ խողովակների երկարացում	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 180 օր հետո
	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից	Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից 280 օր հետո
	ԸՆԴԱՄԵՆԸ	**Պայմանագրով նախատեսված ֆիանանսական միջոցների նախատեսման պահից**	**Լրացուցիչ համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց 280 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձարան
հ/հ 900011791110100
ՀՎՀՀ 02500510

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Սիսիանի ԲՈՒՍՏ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան, Խանջյան 2
«Կոնտերբանկ» ՓԲԸ
հ/հ 19300117911010 0
ՀՎՀՀ 09802793

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2.1
«19» «հուլիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1» գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Տ-1-21, Մ-3-ՔՈՒՉԱԿ-ԵՂԻՊԱՏՐՈՒԾ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ
ՀԻՄՆԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 2016թ.-ԻՆ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	15.10.2016թ.
2	Ճանապարհային պատվածք	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	15.10. 2016թ.
3	Կողնակներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	30.10. 2016թ.
4	Ուղիներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	20.10.2016թ.
5	Ջրթող խողովակների մաքրում և վերանորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	05.10.2016թ.
6	Գոյություն ունեցող d=1.0մ ե/բ խողովակների երկարացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	05.10.2016թ.
7	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	30.10.2016թ.
ԸՆԴԱՄԵՆԸ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**30.10.2016թ.**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011004901
ՀՎՀՀ 02365518
(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 3
« » «հուլիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1» գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	ՆախատեսվումէֆինանսավորելՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 2016թ. պետական բյուջեի հաշվին նախատեսված միջոցներից, ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	S-1-21, Մ-3 – Քուչակ - Եղիպատրուշ ավտոճանապարհի հիմնանորոգում (2016թ. իրականացվելիք աշխատանքներ)	-	-	-	-	-	-	65,235,715	65,235,715	65,235,715	130,471,430	130,471,430	130,471,430	**130,471,430**

**Վճարմանենթակագումարներըներկայացվածենաճողականկարգով*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն
ք.Երևան, Նալբանդյան 28
Կենտրոնական գանձապետարան
Հ/Հ 900011004901
ՀՎՀՀ 02565518

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

Կ.Տ

Հավելված թիվ 4
« » «հուլիսի» 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1» գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » «հուլիսի» 2016թ.
N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1» ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1»

ք. Երևան « » «հուլիսի» 2016թ.

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա.Անդրեասյանի (անձ. AK 0652924, տրված 12.11.2010թ., 051-ի կողմից), ով գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ S-1-21, Մ-3–Քուչակ-Եղիպատրուշ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման «ՏԾԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4 » ծածկագրով բաց ընթացակարգին և պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում, ուստի սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագրի՝ Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնությունը, կից ներկայացված վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից՝ համաձայն ՀՀ կենտրոնական բանկի հաստատած՝ «Վճարահաշվարկային գործառնությունների կատարման ժամանակ կիրառվող փաստաթղթերի նվազագույն վավերապայմանների և դրանց լրացման կանոնների»:

1.2. Ընկերության կողմից սույն ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու, չկատարելու կամ կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնությանը կից ներկայացված վճարման պահանջագիրը ներկայացնում է Ընկերությանը սպասարկող բանկին՝ վճարելու պահանջագրի մեջ նշված գումարը:

1.3. Պահանջագիրը բանկ ներկայացնելուց հետո տասնօրյա ժամկետում Պատվիրատուին գումարը բանկից անկախ պատճառներով չփոխանցվելու դեպքում, Պատվիրատուն Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է «ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ» ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Սիսիան,Խանջյան 2
«Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011791110100
ՀՎՀՀ 09802793

տնօրեն՝ Ա.Անդրեասյան
_____(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ Մ.Առաքելյան
_____(ստորագրություն)

Կ.Տ

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ N 1-06

"_____" _____ 20___ թ.

Վճարող՝ «Սիսիանի ԲՈՒԱՏ» ՍՊԸ ՀՎՀՀ - 09802793	ԴԵԲԵՏ 1930011791110100	ԳՈՒՄԱՐ 68 985 555 ՀՀ դրամ
Վճարողի բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ	ԿՐԵԴԻՏ	ԳՈՒՄԱՐ (ԲԱՌԵՐՈՎ) վաթսունութ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր հիսունհինգ ՀՀ դրամ
Շահառու՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն ՀՎՀՀ - 02565518		
Շահառուի բանկը՝ Կենտրոնական գանձապետարան	h2.N 900005000758	

Գումարը բառերով՝ վաթսունութ միլիոն ինը հարյուր ութսունհինգ հազար հինգ հարյուր հիսունհինգ ՀՀ դրամ

Գնման գործընթացի ծածկագիրը «ՏՄԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4»

Վճարման նպատակը պայմանագրի ապահովում, տուժանքի մասի համաձայնության՝ N «ՏՄԻԳ-ԲԸԱՇՁԲ-2016/4-1»

Փաստաթղթերի անվանումը, դրանց համարները, տրամադրման պայմանը

Կից ___ էջ

Շահառուի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.	Վճարողի ստորագրությունները /_____/ /_____/ Կ.Տ.
Կատարված է շահառուի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ.	Կատարված է վճարողի բանկի կողմից /_____/ <<__>>_____20__թ. Կ.Տ